ԺՈՂՈՎՐԴԱ-ՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հայաստանի Գերագոյն Խորհրդի Յունիսի 5ի նիստում, երբ քննարկուում էր «Հանրապետութեան քաղաքական իրավիճակի եւ նրա կարգաւորման մեխանիզմների մասին» հարցը, պատգամաւոր Ի.Մուրադեանն առաջարկեց, որ հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նախագահը, որպէս ձախողուած քաղաքականութեան հեղինակ, պէտք է հրաժարական տայ: Եւ փոխարինուի ՀՀՇի այլ լիդերով: Պահանջը մերժուեց պատգամաւորների ձայների մեծամասնութեամբ: Դրանով իսկ պաշտպանուեց այն քաղաքականութիւնը, որն ի վիճակի չէ Հայաստանը հանել ճգնաժամից, Արցախի հարցը՝ փակուղուց: Կտրուկ եւ մեկնաբանութիւններ չհանդուրժող էր Լ. Տէր Պետրոսեանի ամփոփիչ խօսքը:

Թւում է, Հանրապետութեան Գերագոյն խորհրդի նախագահի եւ նրա քաղաքական ուղեգծի միահամուռ պաշտպանութիւնը ստեղծուած վիճակում կարելի էր միայն դրական համարել: Սակայն հայ ժողովրդի անվերջանցութեան եւ գալիք դժուար օրերին ուղղուած քննարկումը, նրա ոգին, երբ գոյութիւն ունեն տեսակէտների բազմակարծութիւն, ազգային շահերի տարբեր ըմբռնումներ, պէտք է արդարացուէր ամփոփիչ ելոյթում: Այդ դէպքում Հանրապետութեան նախագահն, իրօք, հանդէս կը գար արտայայտուած կարծիքների համադրողի եւ քաղաքական տարբեր ուժերի համախմբողի դերում: Դրանով իսկ կ'ապահովուէր ժողովրդավարութեան յաղթանակը, որի մէջ է ամփոփուած հայոց ուժը:

Եւ բոլորովին անտեղի էր Հանրապետութեան Գերագոյն Խորհրդում «օտարի շահ պաշտպանողներ» որոնումներն ու «Հայաստանում բնակուող դարաբաղցիներին» մի տեսակ խորթ զանգուածներ ներկայացնելը, ընփիւռքի որոշ կազմակերպութիւնները մատնանշելը:

Չէ որ նման փաստարկները բոլշեւիզմի գինանոցից են եւ հայ ժողովրդին վաղուց յայտնի:

ԼԷՕՆ